ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **26.08.2022թ.**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի 2022 թվականի օգոստոսի 23-ի N 08-Լ որոշումը՝ որոշվել է Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի բյուջետային հայտի նախագիծը և 2022 թվականի յուրաքանչյուր եռամսյակում չօգտագործված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ տեղափոխելու հարցերը հավանության արժանացնել արտահերթ նիստով՝ հեռակա քվեարկությամբ:

Միաժամանակ Խորհրդի անդամների համաձայնությամբ էլեկտրոնային քվեարկության է դրվել նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի բյուջեում հոդվածային փոփոխություններ կատարելու հարցը:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2022 թվականի օգոստոսի 24-ին ժամը 10:00 և ավարտվել 2022 թվականի օգոստոսի 26-ին ժամը 10:00:

Քվեարկության նյութերը ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի բյուջետային հայտի նախագծի քննարկում և հավանության արժանացում:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի չօգտագործված և/կամ խնայված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ ուղղման նպատակով բյուջեում վերաբաշխում նախաձեռնելը թույլատրելու հարցի քննարկում և հավանության արժանացում:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի բյուջեում հոդվածային փոփոխություններ կատարելուն հավանության արժանացում:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ն. Մկրտչյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Սարգսյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Ս. Սահակյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի ավագ գիտաշխատող

Չեն մասնակցել՝

Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ն. Մկրտչյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

2) Ա. Ասոյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ (ներկայացվել է առաջարկություն),

3) Ա. Խոջոյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

4) Ա. Սարգսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

5) Վ. Հովհաննիսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ (ներկայացվել է առաջարկություն),

6) Տ. Քեյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

7) Շ. Դանիելյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

8) Ս. Սահակյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ օրակարգի բոլոր հարցերին **8 կողմ, 0 դեմ:**

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2023 թվականի բյուջետային հայտի նախագծին:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի չօգտագործված և/կամ խնայված ֆինանսական միջոցները հաջորդ եռամսյակ ուղղման նպատակով բյուջեում վերաբաշխում նախաձեռնելը թույլատրելու մասին» Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի որոշման նախագիծը:

3. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի բյուջեում հոդվածային փոփոխություններ կատարելուն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**